

ԱՐԳԻՇԹԻ ԻԻ-Ի ՍԻՍԻԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՀԱՆ ԳՍՅՍԵՐՏՆԵՆ

1975 թ. Սիսիանի շրջանի Արևիս գյուղի մոտ գտնվող Թանահատի վանքի ավերակներից հայտնաբերվեց Արգիշթե II-ի (713—685 թթ. մ. թ. ա.) սեպագիր արձանագրությունը¹։ Այն հրատարակվել է 1979 թ.² և վերահրատարակվել՝ 1983 թ.³։ Արձանագրության հակառակ Լընսի* գիտական տառադարձությունը Ն. Հաբուլյունյանը ներկայացրել է մի շարք հարցականներով (թվով 15 հատ, մոտ 25 սեպախումբ), այսինքն՝ այն լիակատար չի վերծանված⁴։ Ինագրի երկարատև ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց մի շարք ուղղումներ կատարել վերծանության և թարգմանության մեջ։ Քննենք արձանագրությունը տող առ տող⁵։

Տող 1. <nu>-na-bi ka-gu-ki [LUGÁL?] ճներկայացավ իմ առջև [...արքան]։

Այս տողում ճիշտ ընթերցված առաջին երկու բառերից հետո հեղինակը հաջորդ սեպախմբերի մասին գրում է. «Այստեղ հստակ երևում է սոսկ սկզբի ուղղահայաց սեպը, որը դատելով ուրարտական վիմագրության նման տեքստերից, կարելի է համարել ներքևում հիշատակվող էթիուխի երկրամասի արքայի անվան գետնորմինատիվը (որոշիչ)։ Դրանից հետո պահանջված նշանների հետքերը, ըստ երևույթին, վերաբերում են հենց այդ անվանը և LUGÁL «արքա» գաղափարագրին»⁶։ Կարծում ենք երևացող սեպը ոչ թե արքայի անվան որոշիչն է, այլ ke սեպախմբի⁷ վերջին ուղղահայաց սեպը, որից հետո բնագրի վրա ուղղակի տեղ չի մնում վերականգնել որևէ անուն և «արքա» գաղափարագիրը։ Այդպիսի վերականգնման համար անհրաժեշտ է առնվազն 4—5 սեպախումբ, իսկ այդ մասում կա ընդամենը երկու սեպախմբի հետք, որոնցից առաջինը կարելի է վերականգնել որպես գաղափարագիր LUGAL «արքա», «թաղավոր», երկրորդը՝ né⁸։

Այսպիսով, 1-ին տողը վերծանվում և թարգմանվում է այսպես.

1. [nu]-na-bé ka-ju-ke [LUGÁL]-né՝ Ճելավ առջև թագավորը։

Տող 2. KUR E-ti-ú-bi a-[ru-ni/me me-še?] Ճթիուխի, վճարեց հարկը։

Այս տողի առաջին բառը հստակ երևում է բնագրում և այն ճիշտ է վերծանված։ Հեղինակը հաջորդ երկու բառերը վերականգնում է «a նշանի և հա-

1 «Առվեսական Հայաստան», 20. VIII. 1975, «Коммунист», 24. VIII. 1975.

2 Ն. Վ. Հաբուլյունյան, Արգիշթի II-ի նորահայտ սեպագիրը (այսուհետև՝ ԱՆՍ), («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 93—104).

3 Н. В. Арутюнян. Новая урартская надпись из Сисхана (այսուհետև՝ НУНС). («Древний Восток», № 4, 1983, с. 195—220).

* Փարակթողի առաջին երեսին միջնագրում խաչ է փորագրվել, որի պատճառով արձանագրությունը գրեթե ամբողջությամբ տաշվել, հանվել է։

4 НУНС, с. 196.

5 Արձանագրությունից կատարված մեջբերումները (տառադարձություն և թարգմանություն) տալիս ենք ըստ Ն. Հաբուլյունյանի վերահիշյալ աշխատությունների (ԱՆՍ, НУНС)։

6 ԱՆՍ, էջ 94, НУНС, с. 201.

7 Ուրարտեանցի մեջբերումները տրված են Ի. Դյակոնովի մշակած սիստեմի համաձայն (И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963, с. 29—31, 97—100 և նրա ալլ աշխատություններում)։

մանման այլ տեքստերի հիման վրա⁸։ Սակայն *a* նշանից հետո պահպանված են ևս 5 սեպախումբ, որոնցից առաջինը հստակորեն ընթերցվում է *le/i*, երկրորդը՝ *a*⁹։ Վերջինից վատ է պահպանված միայն առաջին ուղղահայաց մեծ սեպին հաջորդող վերին ուղղահայաց փոքրիկ սեպը, Նրորող նշանի առջևի փոքրիկ հորիզոնական սեպի հետքը (ուղղությունը որոշել հնարավոր չէ), այնուհետև դեպի աջ ուղղված հորիզոնական փոքրիկ սեպը և այդ երկու սեպերի միջև մեկ ուղղահայաց սեպի տեղի առկայությունը թույլ են տալիս այդ սեպախումբը վերականգնել որպես *[š]*։ Այս հատվածի չորրորդ նշանը ևս կարելի է ընթերցել *a*, որից պահպանված են առջևի ուղղահայաց մեծ սեպի և ներքին հաջորդող վերին փոքրիկ ուղղահայաց սեպի վերին մասերը։ Տողի վերջին նշանից մնացել է միայն մեկ հորիզոնական փոքրիկ սեպի հետք (որի ուղղությունը որոշել հնարավոր չէ), ինչպես նաև՝ մեկ ուղղահայաց սեպի վերին մասը։ Սրանից հետո քարի վրա մեծ փոս է գոյացել, և որևէ սեպի հետք չի երևում։ Նշած սեպերի հետքերը և ամբողջ նախադասության բովանդակությունը, որ բերված է ստորև, թույլ են տալիս այդ մասում վերականգնելու

d[e] նշանը։ Այս և 2-րդ տողի **KURE-*li-ú-še*** բառից հետո առկա *a*, *le*, *a*¹, *[š]* և *ia* սեպախմբերը տալիս են *a-le* և *a-[š]i-*ia*-d[e]* բառերը։ Վերջինս *a-ša-de* ձևով վկայված է նաև ներկա արձանագրության 22-րդ տողում։

Սեպագիր տեքստերում առաջին անգամ հանդիպող *ašade* բառը *ašu* «ընթանալ», «հետևել»⁹ բայի սահմանական եղանակի, անցյալ անկատար ժամանակի, եղակի թվի 1-ին դեմքով վկայված ձևն է, որը կթարգմանվի «ընթանում էի», «հետևում էի» (հմտ.՝ *hu-ti* «աղոթել»-*hu-ti-a-de* «աղոթում էի», *bi-du* «դարձնել», «դառնալ», «վերադարձնել», «վերադառնալ»-*bi-di-a-de* «դարձնում էի», «դառնում էի», «վերադարձնում էի», «վերադառնում էի»)։

Այսպիսով 2-րդ տողը պետք է կարդալ.

2. **KURE-*ti-ú-še*** *a-le a-[š]i-*ia*-d[e]*, որը 1-ին տողի և 3-րդ տողի առաջին **KURE-*ba-né*** «երկիրը» բառի հետ կթարգմանվի. *[1]* «Նշված առջևս թագավորը *[2]* Նիթուան, երբ ընթանում էի *[3]* (իր?) երկիրը»։

Տող 3. **KURE-*ba-ni-e*** *a-li-li URUMES¹* «երկրի։ *Alili* քաղաքները»։

Նախադասության առաջին **KURE-*ba-né-e*** բառը թարգմանված է եղակի թվի սեռական հոլովով՝ «երկրի», սակայն քանի որ այն տրված է եղակի թվի ուղղական հոլովով, ուստի պետք է թարգմանել «երկիր», «երկիրը»։ Նրկորդ բառը՝ *a-le-le*, որ չի թարգմանված, լինելով *aš* «սա», «ինչ» հարաբերական դերանվան հոգնակի ձևը թարգմանվում է «որոնք»։ *a-le-le URUMES¹* *ha-ši-a-le* կապակցությունը բավականին նման է Արգիշթե 1-ի հորխոռյան տարեգրության կրկնօրինակի հատվածներից մեկին՝ (*a-le-e-le LUGAL MES¹* *[a]r-nu-ia-le*)։ Գ. Մելիքշվիլին այս հատվածը թարգմանել է այսպես. «թագավորները, որոնք եկան օգնության»¹⁰։

3-րդ տողի համար (հաջորդ տողի առաջին բառի հետ) կարելի է տալ հետևյալ թարգմանությունը. (3) «երկիրը։ Քաղաքները, որոնք (4) լսում էին»։ Տող 4. *ha-ši-a-li lu(?)*-*a(?)*-*u-li(?)* *e-si* «լսեցին ... տեղը»։

Ժիշտ վերծանված *ha-ši-a-le* բառը հոգվածագիրը թարգմանում է «լսեցին» (սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ, հոգնակի թիվ, երրորդ դեմք), կարծում ենք, անհրաժեշտ է թարգմանել սահմանական եղա-

⁸ ԱՆՍ, էջ 94, H5HC, c. 202.

⁹ ԱՆՍ, էջ 97, H5HC, c. 209.

¹⁰ YKH, № 128, B1, стр. 33—34.

նակի, անցյալ անկատար ժամանակի, հոգնակի թվի երրորդ դեմքով՝ «լսում էին»։ Հաջորդող վեց սեպախմբերից երեքը տրված են հարցականով, իսկ առաջին շորս սեպախմբերից կազմված մասը որևէ իմաստ չի արտահայտում։ Այն նշանի ընթերցումը, թերևս, ճիշտ է, և այն կարելի է ընկալել նաև որպես գաղափարագիր UDU՝ «ոչխար», «մանր եղջերավոր անասուն»։

Հաջորդ սեպախումբը, թեկուզ հարցականով, a (ա) ընթերցելու համար հաշվի չպետք է առնել առջևի, դեպի աջ ուղղված հորիզոնական փոքրիկ սեպը, որը կա բնագրում։ Այդ, հաջորդ մեկ ուղղահայաց և հեղինակի կողմից և ընթերցված եռանկյունաձև սեպի միջոցով այդտեղ կարելի է վերականգնել M[Á]Š գաղափարագիրը, որից չի պահպանված երեք թեք, իրար վրա պոնկող սեպերից կազմված մասը¹¹, M[Á]Š -ից հետո ընթերցվում է TUR «փոքր» գաղափարագիրը։ Երեք ընթերցված գաղափարագրերը միասին կազմում են UDU M[Á]Š. TUR, որը նշանակում է «ուլ»։ Այս տողի հաջորդ նշանը կարելի է վերծանել [T]AG՝ «զոհաբերել»։ Չի պահպանված միայն առջևի զուգահեռ, դեպի աջ ուղղված հորիզոնական երկու փոքրիկ սեպերից կազմված մասը, սակայն տեղի առկայությունը լիովին հնարավորություն է տալիս վերականգնելու այն։

[T]AG սեպախմբից հետո պահպանված է ևս երկու նշան՝ le և e (վերջինից՝ միայն առջևի մասը)։

Եվ այսպես՝ 4-րդ տողը կարելի է վերծանել և թարգմանել հետևյալ կերպ.
4. ha-ši-a-le UDU M[Á]Š. TUR [T]AG-le-e լսում էին, ու (էին) զոհաբերում։

Արձանագրության առաջին շորս տողերից կարելի է ենթադրել, որ Եթիու երկրի արքան ելել է Արգիշթե II-ի դեմ՝ ոչ թե նրան իր հնազանդությունը ցույց տալու և հարկ վճարելու համար, այլ փաստորեն, զորքով կռվի էր դուրս եկել ուրաբտական էքսպանսիայի դեմ, և, հավանաբար, այդ պատերազմի բարեհաջող ելքի համար է, որ նրա արքայության երկրի քաղաքները զոհաբերություն էին կատարում։

Տող 5. a-li-li gu-nu-ši-ni-e թարգմանված է «alili զորքը»։

Այս տողի gu-nu-ši-ne-e բառը, որի հիմքն է gu-nuše «ճակատամարտ», «կռիվ», «զորք», տրված է եզակի թվի բացառական-գործիական հոլովով և պետք է թարգմանել ոչ թե «զորքը», այլ «զորքով», «կռվով», «ճակատամարտով», այսինքն, 5-րդ տողը կարելի է թարգմանել (5) «ուլբեր-որ (=որոնք) կռվով»։

Տող 6. a-ri bi-ri [i]š-ti-ni [LÚ-tú?]-bi-ni «arī biri այստեղ գերիներ»։

Ինչպես տեսնում ենք, arī biri կարծեցյալ բառերը թողնված են առանց թարգմանության։ Տողի առաջին նշանը վստահորեն վերականգնել հնարավոր չէ, քանի որ քարի վրա այդ մասում ոչ մի հետք չի պահպանվել, իսկ a ընթերցման դեպքում հաջորդ երկու re/i և be վանկերի հետ կատացվի [a](?)-ri-be «հարյուր(?)»-հազար» բառը, որը թերևս ընդունելի է, քանի որ նախորդ տողում խոսվում է զորքի մասին, սակայն, հարյուր հազարանոց բանակի գոյությունը Եթիու երկրում կասկածելի է թվում, ուստի կարելի է առաջին վանկը ճն վերականգնելով ստանալ [šú](?)-ri-be «հինգ(?)»-հազար¹² բառը։

[šú]-ri-be բառից հետո re/i նշանն է, այնուհետև, ըստ հեղինակի, պետք է լինի iš սեպախումբը։ Սակայն բնագրում լավ պահպանված սեպերը թույլ

¹¹ Սեպախմբի այդ մասում (քայքայվելու պատճառով) փոսիկ է առաջացել, որը առաջին հայացքից կարող է ընկալվել նաև որպես ուղղահայաց սեպ, սակայն վերջին եռանկյունաձև սեպի առկայությունը խոսում է մեր վերականգնման օգտին։

¹² arībe և šurībe բառերի թարգմանությունը տալիս ենք ըստ՝ Հ. Կարազյոզյան, Ուրարտական նորահայտ գաղափարագրեր (այսուհետև՝ ՈւնԳ), (ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 2, էջ 63)։

են տալիս այդտեղ հստակորեն վերականգնել *da* սեպախումբը, որից չեն պահպանված միայն դեպի աջ ուղղված երկու ղուգահեռ մեծ սեպերի մեջ գրտնրվող երկու՝ իրար հաջորդող, դեպի աջ ուղղված փոքրիկ սեպերը: *da* նշանից հետո լրիվ ընթեռնելի են *le* և *e* նշանները: Հաջորդ նշանը կարելի է կարգալ Տ1. պահպանված են ձախ և աջ հորիզոնական փոքրիկ սեպերը (չկա այդ սեպերի միջև գտնվող ուղղահայաց սեպը): Մյուս սեպախմբից թեև տեսանելի է միայն դեպի աջ ուղղված փոքրիկ հորիզոնական սեպը, սակայն տեղի առկայությունը թույլ է տալիս այդ նշանը ևս վերականգնել որպես [Տ]1: Տողի վերջին նշանը ու/ի-ն է, որը ն. Հարությունյանը ճիշտ է ընթերցել:

Այսպիսով, 6-րդ տողում [ՏՆ]-ri-bé բառից հետո առկա են *re/i*, *da*, *le*, *e*, *Տ1*, [Տ]1, *né* սեպախմբերը: *da* վանկը ընդունելով որպես գաղափարադիր DA (աքաղ. *leḥû*) «մոտենալ»¹³, հաջորդ երկու *le* և *e* նշանների հետ կկարգացվի DA-le-e, որ նշանակում է «մոտեցան»: [ՏՆ](?)-ri-bé «հինգ(?)»-հազար» և DA-le-e «մոտեցան» բառերի միջև ընկած *re/i* սեպախումբը ըստ նախադասության բովանդակության պետք է նշանակի որևէ գոյական՝ «մարդ», «գինձոր», «թշնամի» իմաստով: Որպես առանձին գաղափարագիր *re/i*-ն սեպագիր տեքստերում հանդես չի գալիս և որևէ իմաստ չունի. հնարավոր է, որ բնագրում գրչի կողմից *re/i* նշանից առաջ բաց է թողնվել *e* նշանը, որը *re*-ի հետ կիաղմեր *e-re* «մարդ»¹⁴ բառը, որ լիովին կհամապատասխանի այդ տողի իմաստին:

Տողի վերջին նշանները, *Տ1*, [Տ]1, *né* անկասկած տալիս են I[G]I-I[G]I-né (=Տ1-Տ1-né) գաղափարագիրը՝ «պարտություն» իմաստով:

Հետևաբար, 6-րդ տողը ամբողջությամբ կտրելի վերծանել հետևյալ կերպ. 6. [ՏՆ](?)-ri-bé <*e*>-re DA-le-e I[G]I-I[G]I-né: Նախորդ տողի վերջին և հաջորդ տողի առաջին՝ *zadube* «կատարեցի» բառերի հետ կթարգմանվի՝ (5) «...կովով (6) հինգ(?)»-հազար մարդ մոտեցան, պարտություն (7) արեցի (պարտության մատնեցի)»:

Արձանագրության այս հատվածը գրեթե նույնությամբ կրկնում է Արգիշթե I-ի հորխոռյան տարեգրության կրկնօրինակի հատվածներից մեկը, որ առկա է .[ՏՆ](?)-ri-bé e-re DA-bé [k]a-ú-ke gu-nu-Տ1-né-e', ալիսնքն «հինգ(?)»-հազար մարդ էլավ-առեց կովով...»¹⁵:

7—9-րդ տողերը բնագրում լավ են պահպանված և ճիշտ են վերծանված ու թարգմանված:

Տող 7. *za-du-bi 'a-še* SAL₁u-tú Տ1-ú-bi

8. URUMES GIBIL É-GAL₁MES [ḫar-ḫar-ՏՆ-bi?]

9. i(?)-Տ1-a-Տ1-e ՏՆ-ga ՏՆ-i-ni-ni (7) «արեցի, աղամարդկանց, կանանց տալիս: [9] քաղաքները հրկիզեցի, ամրոցները ավերեցի: [9] iṣiaše բոլորը միասին»:

8-րդ տողում հեղինակը, ելնելով ռուրարտական տեքստերի համեմատությամբ¹⁶, վերականգնում է [ḫar-ḫar-ՏՆ-bi] «քարուքանդ-արի», «ավերեցի»

13 René Labat, Manuel d'épigraphie akkadienne (այսուհետև՝ MEA), Paris, 1952, №335:

14 Այս բառի թարգմանության մասին տե՛ս Ուն7, էջ 68—69:

15 YKH, № 128, A1, տող 18—19, որի վերջնական ընթերցումը և թարգմանությունը տվել է Հ. Կարադոյանը (տե՛ս Ուն7, էջ 68—69):

16 ԱնՍ, էջ 95—96. HVMC, c. 204.

րալը, սակայն քանի որ ընթեռնելի են վերջին երեք՝ Տ[ն], ն, be նշանները, ուստի այդ բառը հարկավոր է վերականգնել [har]-[har]-Տ[ն]-ն-be ձևով:

9-րդ ստղի առաջին՝ i-Տi-a-Տe-e բառը չի թարգմանված: Ամենայն հավանականութեամբ սա եղակի թիվ, ներգրական-երկրորդ հոլովով տրված գոյական է որի նիւթն է i-Տe, իսկ aՏe-ն հոլովական վերջավորութիւնն է (հմտ. e-ba-ne ճերկիր-e-ba-ni-a-Տe ճերկում):

Տող 10. gu-nu-Տe ma-a-nu ma-ri-n[i?] «Ճակատամարտ եղավ: Ավագանին»:

Այս տողի gu-nuՏe manu բառերից հետո, ինչպես տեսնում ենք, հեղինակը ընթերցում է ma-ri-n[i?]: Բայց առաջին սեպախումբը ma լինել չի կարող, որովհետեւ ma նշանը սկսվում է երեք՝ իրար զուգահեռ, հորիզոնական դեպի աջ ուղղված փոքրիկ սեպերով, իսկ բնագրում պարզորոշ երևում են երկու նըման սեպ, որոնցից հետո՝ դեպի ձախ ուղղված հորիզոնական փոքրիկ մի սեպ էս, որոնք հաջորդ երկու ուղղահայաց սեպերի հետ (վերջին ուղղահայաց սեպը վատ է պահպանված) տալիս են iՏ՝ սեպախումբը: Հաջորդ ri ընթերցված սեպախմբի տեղը բնագրում խիստ քայքայված է, պահպանված է միայն սկզբի, դեպի աջ ուղղված, հորիզոնական փոքրիկ սեպը, սակայն քանի որ հաջորդ նշանից պահպանված սեպերի հետքերը թույլ են տալիս հստակորեն վերծանել de՝ (այստեղ հեղինակը հարցականով ընթերցում է n[i?]), ուստի այդ տեղում վերականգնելով [t[e] սեպախումբը, հնարավորութիւն կստանանք ma-ri-n[i?]-ի փոխարեն կարդալ iՏ՝-[t[e]-de՝ բառը (եզակի թիվ, ուղեորական-առաջին հոլովով տրված տեղի մակբալ)՝ «Ղեկպի ալնտեղ»¹⁷ իմաստով:

10-րդ տողը պետք է կարդալ և թարգմանել այսպես.

10. gu-nu-Տe ma-a-nu iՏ՝-[t[e]-de՝ «Կռիվ եղավ: Դեպի ալնտեղ»:

Տող 11. KURՏu-lu-qu-ն-e [e?]-di-n

Ընթերցված են 9 սեպախումբ, թեև տեքստի մանրագնին ուսումնասիրութիւնից պարզվեց, որ այդ տողում առկա են 12-ը: Հեղինակը KURՏu-lu-qu-ն-e ընթերցումից հետո հարցականով վերականգնում է e նշանը, որի փոխարեն, սակայն, պահպանված սեպերի հետքերը (դեպի ձախ ուղղված առաջին հորիզոնական փոքրիկ սեպը, նրան հաջորդող ուղղահայաց մեծ սեպը և երկու իրար զուգահեռ փոքրիկ սեպերը. չի պահպանված միայն վերջին մեկ ուղղահայաց սեպը)¹⁸. հնարավորութիւն են տալիս վերականգնել de նշանը: de ընթերցման ճշտութիւնն ապացուցվում է նաև նախորդ տողի վերջին՝ ուղեորական-առաջին հոլովով տրված բառի միջոցով, որը ցույց է տալիս հաջորդ բառի՝ ևս նույն հոլովին պատկանելը, այսինքն՝ iՏ՝-[t[e]-de՝ KURՏu-lu-qu-ն-e-de «Ղեկպի ալնտեղ, դեպի Ծուռուկ» (հմտ. iՏ-te-e-d[e] uՏ-ta-de KURMa-na-je-d[e])¹⁹ «Ղեկպի-ալնտեղ արշավեցի՝ դեպի Մանա», iՏ-te-e-de uՏ-ta-a-d[e] KURFu-lu-a-de-e-de²⁰ դեպի-ալնտեղ արշավեցի, դեպի-Պուլտադե»):

Տողի հաջորդ սեպախմբից պահպանված հորիզոնական դեպի աջ ուղղված մեծ և նրանից հետո դեպի ձախ՝ հորիզոնական փոքր սեպերի, ինչպես նաև մեկ ուղղահայաց սեպի միջոցով կարելի է վստահորեն վերականգնել lujՏ

¹⁷ Այս բառի թարգմանութիւն մասին տե՛ս Հ. Հ. Կարազոյլան, Անհայտ գաղափարաբեր հայտնի կոթողների վրա (ՀՍՍՀ ԳԱ «Լրագր», 1976, № 10, էջ 97):

¹⁸ Այս արձանագրութիւն մեծ սեպախմբերի վերջին փոքրիկ դեպի աջ ուղղված հորիզոնական սեպերի փոխարեն գծիկներ են քաշված, որոնք մեծ մասամբ չեն պահպանվել:

¹⁹ Г. А. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960. Լրացումները նայել «Вестник древней истории», 1971, № 3, 4 (աղյուսեռե՛ն՝ УХН), № 155, В, տող 14—15, ուր ti=te, di=de, i=je₄:

²⁰ УХН, № 155, Е, տող 8—9, ուր di=de:

նշանը, որից չի պահպանված առջևի հորիզոնական սեպի ներքևում գտնվող մեկ հորիզոնական և երկու ուղղահայաց սեպերից կազմված մասը: Այնուհետև տողում ընթեռնելի են *ta, de h e* նշանները (վերջինից ունենք առջևի՝ իրար դուգահեռ հորիզոնական փոքրիկ սեպերը և ուղղահայաց սեպի վերին մասը): Պարզ է, որ ընթերցված նշանները տալիս են *lu, š-ta-de-e* — «արշավեցի» բայը՝ դրված սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի առաջին դեմքով:

Այսպիսով, 11-րդ տողը վերծանվում է հետևյալ կերպ.

11 KUR Šu-lu-qu-ú-e-de, *lu, š-ta-de-e*, որը նախորդ տողի *istade* բառի հետ միասին թարգմանվում է . /10/ «...դեպի-ախտեղ, /11/ դեպի-Ծուռեղու արշավեցի»:

Հաջորդ՝ /12/-րդ տողի /13/ URU Ir-du-a-ka-a-l nu-na-bi ընթերցումը և՛ թարգմանությունը (/13/ «Իրդուա քաղաքի առջև՝ նշանաշարված») միա նդամալն ճիշտ է:

Տող 13. *ka-qu-ki 'za-zi(?) -nu bu-ra áš-tú-bi* «առջև Ջագինուն, ստորև դարձրի»: Այս տողը բնագրի համեմատաբար լավ պահպանված տողներից մեկն է, և մեկ-երկու սեպախմբից բացի, մնացածները ճշտ լավ ընթեռնելի են.

Առաջին ճիշտ ընթերցված բառից հետո հեղինակը երկրորդ բառը վերծանում է *'Za-zi(?) -nu* «Ջագինուն»: Այս հատվածի առաջին սեպախումբը ընդունել որպես մարդ անվան դետերմինատիվ (որոշիչ)՝ հնարավոր չէ, քանի որ նման ընթերցման համար հարկավոր է մեկ ուղղահայաց սեպ, իսկ բնագրում շատ հստակ երևում է դեպի աջ ուղղված մեկ երկար հորիզոնական սեպ, և նրան թեքությունը հատող մի սեպ ևս: Այդ նշանը անկասկած KUR գաղափարագիրն է՝ «թշնամական» իմաստով: Հա նշանի փոխարեն բնագրում պահպանված երկու՝ իրար դուգահեռ փոքրիկ սեպերը, այնուհետև մեկ ուղղահայաց և իրար վրա գտնվող երկու ուղղահայաց սեպերի վերին մասերը գալիս են ասելու, որ այդ սեպախումբը պետք է ընթերցել UK[Ú] (ամենավերջին իրար վրա գրտնվող ուղղահայաց փոքրիկ սեպերը լավ չեն պահպանված) «ժողովուրդ» և ոչ թե *za*: Հաջորդ սեպախումբը հարցականով ընթերցված է *zi(?)*, որը սակայն ճիշտ լինել չի կարող: Բնագրի այդ հատվածը որևէ վնասվածք չունի, իսկ պահպանված նշանը DAN գաղափարագիրն է, որը հաջորդ NU-ի հետ միասին նշանակում է «հզոր»: Տողի վերջին երկու՝ *bura áštube* «ստորով դարձրի», «ստրկացրի» բառերը ճիշտ են վերծանված: 13-րդ տողը պետք է կարդալ և թարգմանել հետևյալ կերպ.

13. *ka-jù-ke KÚR UK[Ú] DAN·NU bu-ra áš-tú-bé* /12/ «...ելավ /13/ առջև թշնամական ժողովուրդը հզոր, ստորև դարձրի (=ստրկացրի)»: KÚR UKÚ DAN·NU «թշնամական ժողովուրդը հզոր» բառակապակցությունը որը առաջին անգամ է հանդես գալիս արձանագրություններում, հիմնականում հանդիպում է KÚRLÚUKÚMES «թշնամական մարդիկ /ժողովուրդ/»²¹ ձևով:

Տող 14. *me-še e-di-a te-ru-bi DHal-di-ni-ni*

15. *al-su-i-ši-ni iš-te-di* /14/ «հարկ այնտեղ նշանակեցի: Խալդի աստված /15/ մեծությունը ալստեղ(?)»:

15-րդ տողի *istade* բառը հարցականով թարգմանված է «այստեղ», սա-

²¹ LÚUKÚMES ձևը, *tane* կամ *u3* վերջավորապես *ir* բնակիչները, «ժողովուրդը», իմաստով արձանագրություններում հաճախ հանդիպող ձև է, տե՛ս YKH, N 127, III, տող 35, N 155, C, տող 3, D, տող 8, N 160, տող 6, N 264, ուր., տող 25:

կայն պետք է թարգմանել «դեպի-այնտեղ», որից հետո օրինաչափ կլինեն տալիս տողում տեսնել սֆաժե «արշավեցի» բայը, որը կամբողջացնենք ամբողջ աստվածի խմբատը, այն է՝ (14) «հարկ այնտեղ դրեցի: հալդյան (15) մեծությամբ դեպի-այնտեղ <արշավեցի>»:

Նման կապակցությունը շատ բնորոշ է արձանագրությունների լեզվին և վկայված է բազմաթիվ տեքստերում²², ուստի սֆաժե արշավեցի բառի բացահայտությունը կարելի է դիտել որպես մոռացության արդյունք գրչի կամ արձանագրությունը կադմոտի: կոդմից:

Տեքստի հաջորդ՝ 16--17-րդ տողերը վերծանված են.

Տող 16. 'Ar-giš-ti-ni 'Ru-sa-a-hi

17. LUGA'L DAN·NU LUGA'L KURBi-a-na-a-ú-e: KURBi-a-na-a-ú-e բառը հեղինակը տալիս է, հավանաբար, Արգիշթեն II-ի Հեղիի արձանագրության²³ հիման վրա, իսկ տեքստում գրված է KURBi-a-i-na-ú-e:

18--19-րդ տողերը միանգամայն անվնաս են և ճիշտ են ընթերցված:

18. a-lu-se URUTu-uš-pa-a UR[U]

19. ^DHal-di-ni-né ba-ú-ši-né

Նախորդ երկու տողերի հետ միասին այս հատվածը թագավորների մեծարման հայտնի բանաձևն է, որը վկայված է բազմաթիվ արձանագրություններում:

(16) «Արգիշթեն Ռուսայորդին (17) թագավոր (է) հղոր, թագավոր Բիաինելի, (18) իշխանը Տուշպա քաղաքի: (19) հալդյան հրամանով»:

Տող 20. 'Ar-giš-ti-se a-lil i(?)-si-n[i?]
«Արգիշտին ասում է is[ni(?)]:»

Այս նախադասության վերջին բառի առաջին սեպախումբը հեղինակը հարցականով ընթերցել է ի: Հարցականի կարիք ամենևին չկա, քանի որ այդ և հաջորդ se/i նշանները պարզ երևում են բնագրում: Վերջին նշանը n[i?] լինել չի կարող, որովհետև պահպանված են երեք իրար զուգահեռ հորիզոնական փոքրիկ սեպեր: Սրանք հիմք են տալիս վերականգնելու ի նշանը (չի պահպանված առջևի մասը): Տողում պահպանված է ևս մեկ նշան՝ a, որի ներքևի աջ անկյունից սկսած քարը թեքությամբ ջարդված է: Դատելով քարի ուղղությունից, այդ մասում պակասում է ևս մեկ ոչ մեծ սեպախումբ: Ելնելով նախադասության բովանդակությունից, որը մենք կտեսնենք ստորև, վերջին վանկը կարելի է վերականգնել [še], որը նախորդ նշանի հետ կտա a-[še] «երբ» բառը:

Տողն ամբողջությամբ պետք է վերծանել հետևյալ ձևով.

20. 'Ar-giš-ti-še a-le i-si-[l aj-[še]

Այս տողի i-si-l բառը, որը արձանագրություններում հանդիպում է բազմաթիվ անգամ²⁴, Գ. Մելիքիշվիլին չի թարգմանում, իսկ Հ. Կարապոզյանը թարգմանում է «հետո»²⁵, «(այնու)հետև»²⁶, «(այսու)հետև»²⁷:

Երեք ձևն էլ կարելի է ընդունելի համարել 20-րդ տողի թարգմանության համար, սակայն տեքստի այդ հատվածում խոսվում է կատարվելիք գործողությունների մասին: Ուստի ավելի հավանական է տողի հետևյալ թարգմանությունը. (20) «Արգիշթեն (ահա) ինչ (է ասում). (այնու)հետև երբ-(որ)»:

Բնագրում պահպանված է ևս վեց տող:

22 VKH, № 155, B, ԵՊՀ. 13—14, E, ԵՊՀ. 8, 48.

23 VKH, № 276, հակառակ երես, տող 30:

24 VKH, № 89, տող 11, № 100, տող 10, № 167, տող 4 և այլուր:

25 ՈւԱ, № 13, 26:

26 ՈւԱ, № 28:

27 ՈւԱ, № 31:

- Տող 21. DUTU-ni-ni ni-ir-ḫi si-bi-[...]
 22. a-šā-di i-ni ḫa-a-ri-[ni?]
 23. URU A-mu-šā-di a-še₂₀ [pa-ru-bi?]
 24. SAL_{lu-tú-ni-e} KURBI-[a-i-na-di]
 25. 'Ar-gi-š-ti-še <a-li-e>
 26. <a>-lu-še ti-ni-ni <tú-li-e>

21-րդ տողը Ն. Հարությունյանը թողել է առանց թարգմանության, իսկ մյուս տողերը թարգմանել է. (22) «ընթացա այս ճամփով» (23) «դեպի Ամուշա քաղաքը: Տղամարդկանց, (24) կանանց տարա Բիայնիլի: (25) Արգիշտին ասում է՝ (26) Ով (իմ) անունը ոչնչացնի»:

21-րդ տողում ընթերցված ni-ir-ḫi բառի վերջին քի նշանը ճիշտ չի վերծանված: Բնագրում պարզորոշ ընթերցվում է du նշանը, հետևաբար այդ բառը պետք է ընթերցել ni-ir-du, որը նույնպես առաջին անգամ է հանդես գալիս արձանագրություններում: Նույն տողի si-bi-[...] ընթերցված բառի bi վանկից հետո պահպանված է հորիզոնական դեպի աջ ուղղված մեկ սեպի կես մասը և նրա տակ գտնվող զուգահեռ փոքրիկ սեպը, որոնք հնարավորություն են տալիս վերականգնել n[é] նշանը: Քարի ուղղությունից ենթադրվում է, որ այդ տողում պակասում է ևս 1—2 սեպախումբ:

Տողը պետք է վերծանել հետևյալ կերպ.

21. DUTU-ni-né ni-ir-du si-bi-n[é]-[1-2]
 /21/ «Շիվինից (=Շիվինն աստծուց) ni-ir-du si-bi-n[é]».

22-րդ տողի ḫa-a-re «ճանապարհ» բառից հետո, թեկուզ հարցականով, հնարավոր չէ վերականգնել բացառական-գործիական հոլովի né վերջավորությունը:

Քարի վրա դեպի ձախ ուղղված հորիզոնական փոքրիկ սեպը և նրան հաջորդող ուղղահայաց մեծ սեպի վերին մասը հուշում են այդտեղ վերականգնել i, կամ de, որից հետո կոթողը շարված է և պակասում է ևս 2—3 սեպախումբ: Այդ մասում հարմար ենք գտնում վերականգնել š[i]-[a-de] բայը՝ «ելա» իմաստով, որը կարող է ամբողջացնել ողջ հատվածի իմաստը, այսինքն.

- 22 a-šā-de i-né ḫa-a-re š[i]-[a-de]

23. URU A-mu-šā-de... /22/ «ընթացա այս ճանապարհը, ելա /23/ դեպի-Ամուշա (քաղաքը)».

Հաջորդ տողերից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում 23—24-րդ տողերը: 23-րդ տողում URU A-mu-šā-de «դեպի-Ամուշա» բառից հետո առկա են 'a և š i նշանները, որից հետո քարը շարված է, և այդ տողում պակասում են մոտ երեք նշան: Ն. Հարությունյանը š i նշանը ընթերցում է որպես še₂₀, Տեքստի հաջորդ վնասված մասում վերականգնում է [pa-ru-bi?] «քշեցի» բայը, միևնույն ժամանակ ժանոթագրության մեջ նշելով, որ այդ բայը իր տեղում չէ և այն պետք է լինի հաջորդ տողի «SAL_{lu-tu-ni-e}-ից հետո, կամ էլ՝ նախադասության վերջում»²⁸: Այս հատվածը հեղինակը փաստորեն թարգմանում է արձանագրություններում բազմիցս հանդիպող 'a-še SAL_{lu-tú} pa-ru-bé «տղամարդկանց, կանանց տարա»²⁹ հատվածի նմանությամբ: Այստեղ հաշվի չի առնված այն հանգամանքը, որ SAL_{lu-tú-né-e} բառը տրված է ոչ թե սովորական, SAL_{lu-tú} (եղակի ուղղական հոլով) ձևով, այլ բացառական-գործիական հոլովով, որը պետք է թարգմանել «կա-

²⁸ ԱՆՍ, էջ 97, ծան. 18: HYHC, c. 210—211.

²⁹ YKH, № 155, B, ցր. 18—19, C, ցր. 33—34, E, ցր. 22—23, F, ցր. 18—19.

հանցում: Առանց կասկածի նույն հոլովով պետք է դրված լիներ նաև նախորդ տողի 'a-ši բառը, որը կունենա մինչև այժմ մեզ հայտնի արձանագրություններում չվկայված 'a-ši-l-né-e³⁰ ձևը (հմմտ. e-se-e «սեղ»-e-si-l-né-e «տեղից», տեղում»³¹, gu-nu-še-e «կոի», «հակառակառադ»-gu-nu-ši-l-né-e «կովում», «հակառակառադում»³²):

Մեր այս ենթադրությունը հիմնավորվում է նաև 'a նշանին հաջորդող ՏI սեպախմբով, որի նման գրությունը սխալ չի կարելի համարել, քանի որ, նույն տեքստի ?-րդ տողում ևս խոսվում է տղամարդկանց և կանանց գերի տանելու մասին, և այնտեղ «տղամարդ» բառը գրված է արձանագրություններից հայտնի 'a-še ձևով: Հետևաբար, գրիչը հստակորեն տվել է այդ բառի բացառական-գործիական հոլովաձևը, այն է՝ 'a-ši-[l-né-e] «տղամարդկանցով»:

Նախադասության մեջ պակասող բայը, որը պետք է ունենար «դարձա», «ընթացա», «վերադարձա» իմաստներից որևէ մեկը, կարելի է փնտրել հաջորդ տողի վերջում: Քանի որ 24-րդ տողում KURBi-[a-l-na-de] հատուկ գոյականը ուղեորական հոլովով վերականգնելուց հետո, որը պահանջում է հատվածի իմաստը, սեպախմբերի թիվը տողում հասնում է 11-ի³³, ուստի այդ տողում կարելի է վերականգնել ևս մեկ-երկու նշան: Տեղի սղությունը հուշում է այդ մասում վերականգնել գաղափարագիր, որը ունենար վերոհիշյալ իմաստներից մեկը:

Նման իմաստ ունի GI₄ «վերադարձա»³⁴ գաղափարագիրը, որի առկայությունը դեպքում ամբողջ հատվածը կունենա հետևյալ բովանդակությունը.

22. a-ša-de i-né ha-a-re š[i]-[a-de]

23. URU A-mu-ša-de 'a-ši-[i-né-e]

24. GEME₁u-tú-né-e KURBi-[a-l-na-de] [GI₄(?)]

(23) «ընթացա այս ճանապարհը, ելա (24) դեպի-Ամուշա (քաղաք)՝ Տղամարդկանցով (25) (և) կանանցով դեպի-Բիաինելի վերադարձա»:

Այսպիսով, Արգիշին II-ի արձանագրության հակառակ երեսի գիտական տառադարձությունը և թարգմանությունը կարելի է տալ այսպես.

1. [nu]-na-bé ka-jū₁-ke₁ [LUGAL]-n[é]

2. KUR_E-ti-ú-he a-le a¹-[š]i-[a]-d[e]

3. KUR_E-ba-né-e a-le-le URU^{MEŠ}

4. ha-ši-a-le UDUM[A¹Š-TUR [TAG-le-e]

5. a-le-le gu-nu-ši-né-e

6. [šú(?)]-ri-bé <e>-re DA-le-e I[GI]I-I[GI]I-né

7. [z]a-du-bé 'a-še GEME₁u-tú ši-ú-bé

8. URU^{MEŠ} GIBÍL É-GAL^{MEŠ} [har]-[har]-š[ú]-ú-bé

9. 'i-ši-a-še-e šú-ga šú-l-ni-né

10. gu-nu-še ma-a-nu iš'-te-de

11. KURŠu-lu-qu-ú-e-de' luš₁-ta-de-e]

³⁰ Այս մասին բանավոր մեզ հայտնեց Հ. Կարադյոզյանը:

³¹ YKH, № 89, стр. 15.

³² YKH, № 155, E, стр. 10.

³³ Այս արձանագրության մեջ սեպախմբերի թիվը տողերում տատանվում է 8-ի և 13-ի միջև:

³⁴ MEA № 326. Սեպագիր տեքստերում առաջին անգամ այս գաղափարագիրը ընթերցել է Հ. Կարադյոզյանը (տե՛ս «Անհայտ գաղափարագրի հայտնի կոթողների վրա», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 10, էջ 97—98):

12. URU_{Ir}-du-a-ka-a-i nu-na-bé
13. ka-jù-ke KÚR UKÛ DAN·NU bu-ra áš-tú-bé
14. me-še e-di-a te-ru-bé ^DHal-di-ni-né
15. al-su-i-šl-né iš-te-de <uš-ta-de>
16. 'Ar-giš-ti-né 'Ru-sa-še
17. LUGA'L DAN·NU LAGA'L KURBi-a-l-na-ú-e
18. a-lu-se URUTu-uš-pa URU
19. ^DHal-di-ni-né ba-ú-šl-né
20. 'Ar-giš-ti-še a-le i-sl-í a₁-[še]
21. ^DUTU-ni-né ni-ir-du si-bi-n[é?]-[1-2]
22. a-šá-de l-né ha-a-re š[1]-[a-de]
23. URUA-mu-šá-de 'a-šl-[i-né-e]
24. GEME_{lu}-tú-né-e KURBi-[a-l-na-de] [Gl₄?]
25. 'Ar-giš-ti-še [a-le-e]
26. [a]-lu-še ti-ni-né [tú-le-e]

Բերված տառադարձության հնարավոր թարգմանությունն այս է.

«(1) Ելավ առջև թագավորը (2) Եթիուլյան, երբ ընթանում էի (3) (իր?) երկիրը: Որոնք քաղաքները (=քաղաքները որոնք) (4) լսում էին, ով (էին) զոհաբերում: (5) Ովքեր-որ (=որոնք) կոչով (6) հինգ(?) -հազար մարդ, մոտեցան, պարտություն (7) արեցի (=պարտության մատնեցի), տղամարդկանց, կանանց քռեցի, (8) Քաղաքները այրեցի, մարոցները ավերեցի, (9) ի՞նչ -ում բոլորը միասին: (10) Կոիվ եղավ, դեպի-այնտեղ, (11) դեպի-Նուլուկու արշավեցի: 712) Իրդուայի-առջև ելավ (13) առջև թշնամական ժողովուրդը հզոր, ծառա դարձրի, (14) հարկ այնտեղ դրեցի: Խալդյան (15) մեծությունը դեպի-այնտեղ <արշավեցի>: (16) Արգիշթե Ռուսայորդին (17) թագավոր (է) հզոր, թագավոր Բիաինեի, (18) իշխանը Տուշպա քաղաքի: (19) Խալդյան հրամանով (20) Արգիշթեն (ահա) ինչ (է ասում). (Այնու)հետև երբ-որ (21) Շիվինեից (=Շիվինե աստծուց) ni-ir-du si-bi-n[é], (22) ընթացա այս ճանապարհը, ելա (23) դեպի-Ամուլա: Տղամարդկանցով, (24) կանանցով դեպի-Բիաինեի վերադարձա: (25) Արգիշթեն (ահա) ինչ է ասում). (26) Ով անուն(ս) ոչնչացնի...»:


Արձանագրությունը իր կառուցվածքով տարեգրության բնույթ ունի և բաղկացած է երեք մասից:

1. 1—8-րդ տողեր. սա մեկ առանձին հատված է, ուր խոսվում է Եթիու երկրի զորքերի դեմ Արգիշթե II-ի տարած հաղթանակի մասին: Այս հատվածում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սեպագիր արձանագրություններում երկրորդ անգամ³⁵ հանդիպող Եթիու երկրի թագավորի մասին հիշատակությունը, որն անժխտելի փաստ է այդ երկրի գոյության մասին: Չէ՞ որ մինչև այժմ գիտական գրականության մեջ իշխող տեսակետներից մեկն այն է, որ այդպիսի երկրի գոյություն չի ունեցել, և Եթիու անունը սոսկ հասարակ անուն կամ աշխարհագրական հասկացողություն է եղել Հայկական լեռնաշխարհի հյուսիսում գտնվող երկրների համար³⁶:

³⁵ Առաջին անգամ Եթիու երկրի թագավորի մասին հիշատակվում է Սարգուրե II-ի տարեգրության մեջ, УКН № 155, С, տող 51—52:

³⁶ Б. А. Тураев, История древнего Востока, II, Л., 1935, с. 35; Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, с. 28: Ն ու լ յ ն ի՝ Ванское царство (Урарту), М., 1959, с. 70. Г. А. Меликшивили, Днаухи (из истории Южного Закавказья в древневосточную эпоху) («Вестник древней истории», 1950, № 4, с. 38); Ն ու լ յ ն ի՝ УКН, с. 426; И. И. Мещанинов, Аннотированный словарь урартского (Биайнского) языка, Л., 1978, с. 377—378.

Հետաքրքիր է ուլ զոհաբերելու փաստը: Հայտնի է, որ ուլ զոհաբերվում էր միայն գերագույն աստծուն³⁷, և միգուցե, այսուհի խոսքը Եթիու երկրի գերադույն աստվածության մասին է, որի անունը ուղղակի չի նշվում: Այս հատվածում կարևոր է նաև Եթիու երկրի գործի մասին հիշատակությունը, որի թիվը կազմել է հարյուր(?) - հազար, կամ հինգ(?) - հազար մարդ: Երկու դեպքում էլ այն խոսում է այդ երկրի ինքնուրույնության մասին, որը նա կարողացել էր պահպանել Իշպուինեի և Մինուայի համատեղ թագավորության շրջանից



Արգիշթե II-ի արձանագրությունը:

(820—811 թթ. մ. թ. ա.), երբ առաջին անգամ բախվում է ուրարտական գորբերի հետ³⁸, մինչև Արգիշթե II-ի թագավորության շրջանը: Այդ ամբողջ ժամանակահատվածում (մոտ 120 տարի), ինչպես ցույց են տալիս սեպագիր տեքստերի տվյալները, Վանի բոլոր թագավորների համար կարևորագույն խնդիրներից Պեկը եղել է Եթիու երկրի վերջնական հպատակեցումը:

³⁷ YKH, № 25, տող 4, 9, № 27, տող 3, 35, № 143, տող 5, № 281, տող 18:

³⁸ YKH, №№ 20, 21, 22, 23.

Սակայն, ինչպես տեսնում ենք, ուրարտացիները շկարողացան ընկճել Հայկական լեռնաշխարհի ամբողջ հյուսիսային կես մասը դադղիցնող այդ երկիրը, որի սահմանները տարածվում էր Հայկական պարից մինչև Կուր գետի հովիտը և Ճորոխ գետից մինչև Կասպից ծովի ափերը: Դեռ ավելին, շնորհիվ իր կազմակերպվածության, զարգացած տնտեսության, աշխարհագրական նպաստավոր դիրքին, ինչպես նաև անկասկած աշատեղ ևս հայկական էթնոսով բնակեցված լինելուն, Եթիու երկիրը դառնում է Հայկական լեռնաշխարհում ձևավորվող քաղաքական բոլոր կազմավորումների կենտրոնը, այդպիսին էլ մնալով հայ ժողովրդի պատմության ամբողջ ընթացքում:

Արձանագրության երկրորդ մասը 9—18-րդ տողերն են, ուր խոսվում է ղեպի Ծուրուկու արշավելու մասին: Այս արշավանքը հիմնականում նպատակ էր հետապնդում հարկատու դարձնելու տեղական իշխանություններին, որը և հաջողվում է Արգիշթե II-ին:

Արձանագրության երրորդ մասը 19—25 տողերն են: Այստեղ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ^{URU}Amuša — Ամուշա քաղաքի հիշատակությունը: Ուշագրություն՝ արձանագրության տվյալ հատվածը, կարելի է եզրակացնել, որ Ամուշան ղեպի Բիախինեի ետդարձի ճանապարհի կարեւորագույն բնակավայրերից մեկն է եղել, ուր ընթանում էին գերիներով ու հափշտակած հարստությամբ ծանրաբեռնված Արգիշթե II-ի ղորքերը: Եթե ընդունենք, որ նրանք պետք է վերադառնալին Արարատյան դաշտ՝ էրեբունի, ապա ամենակարճ ճանապարհը անշուշտ կարավանային նշանավոր ուղին է, որն Արարատյան դաշտավայրից Արաքսի եզերքով հասել է մինչև Արփու գետի ստորին հոսանքները, այնուհետև հոսանքն ի վեր մտել Վայոց ձոր, որտեղից մի ճյուղը Որոտանի լեռնանցքով դուրս է եկել Զանգեզուր և շարունակվել մինչև Արցախ, իսկ մյուս ճյուղը, Սելիմի լեռնանցքով անցնելով, մտել է Սեանա լճի ավազանը³⁰, Հալանաբար, հենց այս ուղու վրա էլ պետք է փրնտրել Ամուշա քաղաքը: Նկատի ունենալով, որ այս ճանապարհի հանգուցային մասում էր գտնվում միջնադարյան Հայաստանի նշանավոր Մոզ ավանը, որը գոյություն է ունեցել դեռևս բրոնզեդարյան ժամանակաշրջանում³⁰, իսկ հետագայում վկայված է որպես նշանավոր ամրոց, «մեծամեծ վիժօք պատեալ էր վասն ամրութեան»³¹, ինչպես նաև ուրարտա-հայկական և բուն հայկական հնչյունական օրինաչափությունները, հնարավոր ենք համարում անցկացնել Amuša > Moz(Մոզ) զուգահեռը: Անցումը կարող էր կատարվել հետևյալ կերպ. Amuša հատուկ գոյականի վերջին անշեշտ a-ի անկմամբ (ինչպես օրինակ՝ Tušpa > Տոսպ. Zabihā > Ջավսիք³²), § > s (օր.՝ Tušpa > Տոսպ), (Alīštū > Աղստե³³), u(m) > o (օր.՝ Tušpa > (Տոսպ), (KURGuria > Գորիս³⁴) հնչյունափոխությամբ կատարվի *Amos, որից հետո s > z (օր.՝ puluse «կոթող» > փուլուզ «կոթող», aluse «իշխան» «տեր» > Ալուզ (իշխանի անուն³⁵) անց-

39 Ս. Տ. Երեմյան, Ուսումնական քարտեզ, Ուրարտու պետությունը 550—590 թթ. մ. թ. ա., Երևան, 1980:

40 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, Երևան, 1961, էջ 502:

41 «Պատմության նահանգին Սիսական, արաբիալ Ստեփանյանի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաք», Թիֆլիս, 1911, էջ 68—69:

42 Ն. Ստալճյան, Ասորեստանյա և պարսիկ սեպագիր արձանագրությունը կամ նորին քաղվածք, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմության կվերաբերին, Վիեննա, 1901, էջ 44:

43 Մ. Ա. Իսրայելյան, էրեբունի բերդ քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 189:

44 Ն. Ն. Կարազյուզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները (ՀՍՍՀ ԳԱ Աշխարհագր., 1978, № 10, էջ 64—66):

45 Մ. Ա. Իսրայելյան, Ալուզ անվան ստուգաբանությունը («Երևանի պետական համալսարանի Ն. Մառի անվան կարիքների «Աշխատություններ», № 2, Երևան, 1947, էջ 211—214):»

մամբ և առջևի ձայնավորի անկմամբ կտաացվի Մոզ, որին ավելացել է և տեղանվանակերպ ցուցիլը՝ տալով Մոզն ձևը, որը վկայված է⁴⁶ նման կազմությամբ տեղանուններ միայն Սյունյաց աշխարհում մի քանի տասնյակի ևն հասնում, ինչպես օրինակ՝ Բերդն, Դասաակերն, Դեկն, Դերրն, Երերն, Կութն, Արփունչն, Եղէնգն⁴⁷ և այլն։ Սեռական հոլովում չեղտը վերջին վանկի վրա ընկնելով վերականգնվում է նաև ուրարտերենում վկայված վերջին a ձայնավորը, տալով Մոզան ձևը, որը նույնպես վկայված է⁴⁸ Այսպիսով, Amuša > Մոզ-Մոզն-Մոզան անցումները կարելի է, միանգամայն հնարավոր։

СИСИАНСКАЯ НАДПИСЬ АРГИШТЕ II

ВАГАН ГАЙСЕРЯН

Резюме

В 1975 г. была обнаружена клинообразная надпись царя Аргиште II (713—685 гг. д. н. э.), которая была опубликована в 1979 г. Н. В. Арутюняном и переиздана в 1983 г.

Научная интерпретация обратной стороны надписи дана Н. В. Арутюняном с рядом вопросительных мест (числом 15, около 25 клинописных знаков), то есть надпись расшифрована не полностью. Изучение оригинала позволяет внести в изложение текста ряд уточнений и предложить следующий перевод:

«(1) Явился предо-мной царь (2) Этиуйский, когда (я) двинулся к (своей) стране. Города которые (4) слушали, ягненка принесли—в жертву. (5) Которые с войском (6) в пять?-тысяч человек подошли, поражение (7) нанес, мужчин (и) женщин увел. (8) города сжег, крепости разрушил (9) в-іше все вместе. (10) Война была (=началась), туда (11) к Цулуке выступил-в-поход. (12) Перед-Ирдуа предстал (13) предо-мной вражеский народ могучий, в-рабство превратил, (14) подать там наложил. Халдиевым (15) величием туда выступил-в-поход. (16) Аргиште, сын-Русы, (17) царь могущественный, царь Биаинеле (18) правитель Тушпа города. (19) Велением бога Халде (20) Аргиште (вот) что (говорит). (3а) тем когда (21) от бога Шивине nirdu si-bine (22) двинулся по этой дороге (23) к-Амуше, с-мужчинами (и) (24) женщинами в Биаинеле возвратился. (25) Аргиште (вот) что (говорит): (26) кто (мое) имя уничтожит...»⁴⁹. Подобный перевод позволяет предположить, что надпись летописного характера.

1. 1—8 строки, где говорится о победе, одержанной над войском страны Этиу; 2. 9—18 строки, где говорится о походе на страну Цулуку и превращении местных владельцев в данников; 3. 19—25 строки, где говорится о каком-то культовом обряде, который, вероятно, был посвящен удачному исходу похода и победоносному возвращению в Биаинеле.

⁴⁶ «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արեւ-ալիսդպոսի Սիսեաց», Թիֆլիս, 1911, էջ 512:

⁴⁷ նույն տեղում, էջ 509, 510, 511, 512, 514, 518:

⁴⁸ նույն տեղում, էջ 68, 69:

⁴⁹ Транскрипция этого перевода дана в статье.